

Ասիմա — Խանուժ կը հաւաքէ բոլոր վառօդը ու կը դնէ գետնափոր շինութեան մը մէջ դղելի դռան տակ, ու կը բարձրանայ պարիսպների միջանցքը՝ այնտեղ իր պահակ սպասելու, երբ Խան — Ալտայ դուրս կու գայ դղեակէն իր մարդերով, Կըզըլ — Պաշները կը կարծեն որ անոնք պիտի փախչին, Հերետիկոսները կը քաշեն իրենց սրերը ու կը յարձակուին: Ալտայ և իր քաջերը կատաղի կու մղելով դղելի դռան առաջ, Տիմ — Տիմի մի բուն հերոսներ կը պաշտպանուին քաջաբար, հանդէպ հերետիկոսներու մեծ բազմութեան: Կիներ ու դեռատի աղջիկներ վերէն սրտմաշուք կերպով կը դիտեն անցած դարձածը, կ'աղօթեն ու արցունք կը թափեն՝ տագնապի աղաղակներ արձակելով. երեխաներու ձայնը կը բարձրանար մինչև երկինք. վերջապէս կուռոզները կը մեռնին մինչև վերջինը, բայց Կըզըլ — Պաշների կորուստը կրկնապատիկ կը լինի և մինչև անգամ եռապատիկ: Անմիջապէս երբ Խան — Ալտայը կ'իջնայ իրեն ընկերացող այր մարդերով ու կիներով, հերետիկոսները կը լեցուին դղեակը, այնպէս որ ներս մանող ամբոխի համար բաց տեղ չի մնար. աղջիկներ ու նորատի կիներ մեծ մասամբ թոյն կը կլին. Աամա — Խանուժը կրակ կու տայ վառօղին, որ կը խորտակէ դղեակի մի մասը այն բոլոր Պարսիկների վրայ որ այնտեղ մտած էին, ինչպէս և Տիմ — Տիմի շատ մը ընտանիքների ու երեխաների: Շատ քիչեր էին որ կարողացան ազատուիլ, սպորդ կիներ ու երեխաներ դերի տարուեցան, ծերերն ու պառաւ կիները մորթուեցան:

Պարսիկները ինչ որ մնացեր էր ամբողջութեամբն՝ քանդեցին, ու հրդեհեցին բնակարանները. հերետիկոսներու կորուստը (մահը) անհաշիւ է:

Սյդ ժամանակէն Տիմ — Տիմը մնացեր է աւերակ ու առանց բնակչի: Այս գեղեցիկ պաշտպանութիւնը հռչակ հանած է Քիւրդխտանի մէջ. և մուլլահ Պաթ — Ի, Միմ, Հէ (Մուհամմէտ), այս դէպքին վրայ գրած ունի գեղեցիկ բանաստեղծութիւն մը: Քիւրդերը իրենց հաւաքումներու մէջ կը սիրեն